




Հոդվածի հղումը. Ավագյան Գ., Վարդանյան Ք., Վարդանյան Թ. (2024), ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերի գնահատում, *Տնտեսություն և հասարակություն*, ՀՊՏՀ, *Տնտեսագետ*, 2(5), 78-105, DOI: 10.52174/29538114_2024.2-78
Ներկայացվել է խմբագրություն՝ 08.07.2024 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 29.08.2024 թ.
Երաշխավորվել է հրատարակման՝ 18.11.2024 թ.


ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու


 <https://orcid.org/0000-0003-3395-2473>

ՔՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0002-7198-3740>

ԹԵՐԵԶԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի մագիստրանտ
 <https://orcid.org/0009-0006-7335-8910>

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼՆԵՐԻ ՌԻՍԿԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից համաշխարհային տնտեսության զարգացման օրինաչափություններից է իրական և ֆինանսական հատվածների մշտական փոխազդեցությունը և երկրի տնտեսության իրական հատվածի վրա բանկային համակարգի նշանակալի ներգործությունը: Ցանկացած ազդակ՝ արտաքին, թե ներքին, մասնավորապես՝ տնտեսական քաղաքականությամբ հարուցված, փոխանցման բազմաթիվ ուղիներով տնտեսության մի հատվածից տարածվում է մյուս հատվածում՝ խախտելով ձևավորված հավասարակշռությունը կամ նպաստելով հավասարակշռության վերականգնմանն ու պահպանմանը: Երկրի բանկային համակարգում ներդրված ավանդների և տրամադրված վարկերի ծավալների և դրանց կառուցվածքների փոփոխությունների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել ինչպես տնտեսության երկու փոխկապված և փոխազդող հատվածների փոխառնչությունները, այնպես էլ տնտեսության զարգացման վրա ունեցած ազդեցությունը և բանկային ոլորտում ռիսկային դրսևորումները:

Հոդվածում ուսումնասիրվել են ՀՀ առևտրային բանկերի վարկային և ավանդային պորտֆելների կառուցվածքների փոփոխությունները, ֆինանսական կայունության տեսանկյունից գնահատվել են դրանց ռիսկային դրսևորումները: Իրականացվել է ՀՀ առևտրային բանկերի ավանդային և վարկային պորտֆելների՝ տարբեր ուղղություններով վերլուծություն, պարզելու համար, թե կա՞ն արդյոք ռիսկային դրսևորումներ առևտրային բանկերի ներգրաված և տրամադրած միջոցների ժամկետային համապատասխանության, վարկերի տարբեր տեսակների ծավալների և տեսակարար կշիռների հարաբերակցության, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների ավանդների ու վարկերի ծավալների և կառուցվածքների փոփոխությունների, երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերի հարաբերակցության և այլ տեսանկյուններից:

Հիմնաբառեր. ավանդային և վարկային պորտֆելներ, ռիսկեր, դրամավարկային քաղաքականություն, ֆինանսական կայունություն

JEL: G21, G32

DOI: 10.52174/29538114_2024.2-78

Ներածություն: Ազգային տնտեսության իրական և ֆինանսական հատվածները մշտապես փոխազդում են, ինչի արդյունքում պայմաններ են ձևավորվում տնտեսական աճ և զարգացում ապահովելու համար: Ֆինանսական համակարգը կարևոր դեր է խաղում ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդպիսով նպաստելով տնտեսության բնականոն աճին¹: ՀՀ ԿԲ-ն մշտապես ուսումնասիրում է բանկային համակարգի և ֆինանսական համակարգի մյուս օղակների կայունությանը սպառնացող ռիսկերը, դրանց դրսևորման հավանականությունը, և այդ ամենի ամբողջական վերլուծության ու գնահատման միջոցով մշակվում և իրականացվում է դրամավարկային և մակրոպրոդեսնցիալ քաղաքականություն: Ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից առավել կարևոր են բանկային համակարգի, մասնավորապես՝ առևտրային բանկերի ավանդային և վարկային պորտֆելների ռիսկերն ու խնդրահարույց դրսևորումները, քանի որ առևտրային բանկերի ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 83 տոկոսը², և բանկային համակարգի վիճակով են պայմանավորվում ֆինանսական կայունության մակարդակը և զարգացման ուղղությունները: Միաժամանակ, շատ կարևոր է այդ ռիսկերը ուսումնասիրել և դիտարկել ֆինանսական կայունության տեսանկյունից: Հայտնի է, որ ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, որի դեպքում ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդպիսով նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթի խաթարման հավանականությունը: Ֆինանսական կայունության խնդրի ներքո մշտադիտարկվում և գնահատվում են ինչպես ֆինանսական համակարգում, այնպես էլ ներքին ու արտաքին մակրոտնտեսական զարգացումների արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, էջ 7, https://www.cba.am/AM/pperialicals/Stability_Report_2022.pdf

² Տե՛ս նույն աղբյուրը, էջ 43:

հավանական ռիսկերը, դրանց հնարավոր ծագման աղբյուրները: Այդ ռիսկերի համապարփակ վերլուծության և ֆինանսական կայունության վրա դրանց հնարավոր ազդեցության գնահատման արդյունքում մշակվում և իրականացվում է համապատասխան քաղաքականություն³:

Վերջին երկու տասնամյակում համաշխարհային տնտեսությունում պարբերական են դարձել տարբեր պատճառների ազդեցությամբ հարուցված տնտեսական և ֆինանսական ճգնաժամերը, ինչը կարևորել է ֆինանսական և մակրոտնտեսական կայունության պահպանման անհրաժեշտությունն ու այդ նպատակների իրականացմանն ուղղված մակրոտնտեսական կայունացնող և մակրոպրոդեցիալ քաղաքականությունների գործադրումը: Տնտեսական և ֆինանսական ճգնաժամերի ծագման պատճառների ու հետևանքների ուսումնասիրման և վերլուծության շրջանակներում հետազոտողներն ավելի հաճախ են սևեռվում ազգային տնտեսությունում ավանդների ու վարկերի ծավալների ավելացման հետևանքների, արտաքին ու ներքին տատանումների և շոկերի նկատմամբ համեմատաբար ավելի զգայուն՝ վարկեր-ավանդներ հարաբերակցության օպտիմալ մակարդակի որոշման, վարկային և ավանդային պորտֆելների կառուցվածքների փոփոխությունների և դրանց՝ ֆինանսական կայունության ու մակրոտնտեսական զարգացումների վրա ունեցած ազդեցությունների ուսումնասիրության վրա: Վերոնշյալը փաստում է, որ առևտրային բանկերի վարկային և ավանդային պորտֆելների կառուցվածքների բարելավման և առկա ռիսկային դրսևորումների բացահայտման հիմնախնդիրները պարբերաբար ուսումնասիրության և հետազոտության կարիք ունեն, ինչն էլ պայմանավորում է հողվածում արծարծվող խնդիրների ու հարցադրումների արդիականությունն ու կարևորությունը:

Գրականության ակնարկ: Մասնագիտական գրականության քննական ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ հետազոտող տնտեսագետները առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների և տրամադրած վարկերի ծավալների ավելացման համատեքստում առանձնացնում են առևտրային բանկերի ավանդային և վարկային պորտֆելների որոշ ռիսկային դրսևորումներ, որոնք կարող են խնդրահարույց լինել ընդհանրապես մակրոտնտեսական կայունության, մասնավորապես՝ ֆինանսական կայունության տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ դիտարկվում է վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ազդեցությունը կայուն և շարունակական տնտեսական աճի վրա: Կան բազմաթիվ էմպիրիկ բնույթի ուսումնասիրություններ, որոնց արդյունքները փաստում են. հենց որ տնտեսությանը տրամադրված վարկերի՝ ՀՆԱ-ին հարաբերության արժեքն անցնում է 90–100%-ի շեմը, դա բացասաբար է ազդում տնտեսական աճի վրա⁴: 180 երկրի տնտեսությունների ցուցանիշների վերլուծության վրա հիմնված այլ հետազոտության եզրակացությամբ՝ երբ վարկերի և ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշն ավելանում է, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն ավելանում է, հետևաբար՝ ուղիղ կախվածություն կա

³ Տե՛ս նույն աղբյուրը:

⁴ Տե՛ս **Донец С., Пономаренко А.**, Банк России. Индикаторы долговой нагрузки. Серия докладов об экономических исследованиях, №5 / июнь, 2015, էջ 6, https://www.cbr.ru/content/document/file/16736/wps_5.pdf

տնտեսության մասնավոր հատվածին տրամադրված վարկերի աճի և ՀՆԱ աճի տեմպերի միջև⁵:

Առևտրային բանկերի ավանդային և վարկային պորտֆելների խնդրահարույց կողմերից մեկը համարվում է ներգրավված և բաշխված միջոցների միջև ժամանակային խզվածքը: Այստեղ անհրաժեշտ է հիշատակել բանկային «ոսկե կանոնը», ըստ որի վարկերը և ավանդները պետք է հավասարակշռված լինեն ըստ ժամկետների⁶: Չ. Ռաֆայելովը համարում է՝ առևտրային բանկերին միշտ չէ, որ կարողանում են ժամկետային համապատասխանություն ապահովել ներգրավված և բաշխված միջոցների միջև, և ժամանակային խզվածքը իր խնդրահարույց լինելը հատկապես դրսևորում է ճգնաժամային իրավիճակներում⁷:

Բանկային համակարգին բնորոշ կարևոր հիմնախնդիր է համարվում նաև ավելցուկային իրացվելի միջոցների առկայությունը, ինչը հանգեցնում է բանկերի եկամտաբերության անկման: Առևտրային բանկի գործունեության վրա բացասական ազդեցություն ունի ինչպես անբավարար, այնպես էլ ավելցուկային իրացվելիությունը: Բանկի իրացվելիության ցածր մակարդակը սահմանափակում է բանկի վճարունակությունը, հանգեցնում է հաճախորդների վստահության կորստի, հասանելիության նվազման և իրացվելիության պահպանման համար ֆինանսավորման արտաքին աղբյուրների արժեքի ավելացման (այսինքն՝ արտաքին միջոցների ներգրավման ծախսերի ավելացման), համապատասխանաբար՝ ֆինանսական խնդիրների: Բանկի ավելցուկային իրացվելիությունը վկայում է առկա ազատ իրացվելի ռեսուրսների արդյունավետ կառավարման անկարողության մասին⁸:

Որոշ հետազոտողներ համարում են, որ բանկերը կարող են կանխարգելիչ դրդապատճառներով կամ ակամա պահել ավելցուկային իրացվելիությունը: Նախագրուչական դրդապատճառներից է, օրինակ՝ ավելցուկային իրացվելիության կուտակումը ավանդների ծավալների տատանումներից պաշտպանվելու համար, հատկապես, երբ միջբանկային շուկան անարդյունավետ է գործում⁹:

Բանկերի իրացվելիությունը (որը կարող է լինել ինչպես ավելցուկային, այնպես էլ պակասորդային) բնութագրելու համար մասնագիտական հարթակներում առաջարկվում է օգտագործել ավելի լայն հասկացություն՝ «իրացվելիության անհաշվեկշռվածություն» եզրույթը¹⁰: Դա առևտրային բանկի այն վիճակն է, երբ խախտվում է բանկի ակտիվների և պարտավորությունների

⁵ Տե՛ս Банк России. Серия докладов об экономических исследованиях. Индикаторы долговой нагрузки. №5/ июнь, 2015, էջ 6, https://www.cbr.ru/Content/Document/File/16736/wps_5.pdf

⁶ Տե՛ս Золотое правило банков: основные понятия и термины, <https://www.finam.ru/publications/item/zolotoe-pravilo-bankov-20230629-0811/>

⁷ Տե՛ս Ռաֆայելով Չ., Առևտրային բանկերի պորտֆելների գնահատումը և կառավարումը/տնտեսական և գործնական հարցեր/, Եր., Հեղինակային իրատ., 2007, էջ 4, <https://library.asue.am/books/3558.pdf>

⁸ Տե՛ս Arzevitin S. & so on, Banking liquidity as a leading approach to risk management, <https://philarchive.org/archive/ARZBLA>

⁹ Տե՛ս Pierre-Richard Agénor a, Joshua Aizenman b, Alexander W. Hoffmaister, The credit crunch in East Asia: what can bank excess liquid assets tell us? Journal of Financial Economics, 2004, էջ 106, 349–366, <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S026156060300069X?via%3Dihub>

¹⁰ Տե՛ս Бибикова Е.А. и др., Финансовая аналитика: проблемы и решения, 2018, т. 11, вып. 4, էջ 443–453, <https://www.fin-izdat.com/journal/fa/detail.php?ID=73702>

ռացիոնալ հարաբերակցությունն ըստ մարման ժամկետների, ծավալների և արժույթների տեսակների, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական կայունության կորստի:

Շատ տնտեսագետներ են վարկային պորտֆելի որակը գնահատելիս ուշադրություն դարձնում ժամկետանց վարկերի և չաշխատող վարկերի տեսակարար կշռի մեծացման խնդրին¹¹: Ըստ Եվրոպական բանկի մասնագետների՝ չաշխատող է համարվում այն վարկը, որը մի քանի ամիս ժամկետանց կամ չվերադարձված է: Հնարավոր է, որ սա տնտեսական անհաջողության հետևանք է, բայց դա ավելին է, քան պարզապես պարտապանի՝ վարկը մարել չկարողանալը (կամ չցանկանալը): Չաշխատող վարկը բեռ է և՛ վարկառուի, և՛ վարկատուի համար¹²: Այն երկրները, որոնք նվազեցրել են չաշխատող վարկերի կշիռը ընդամենը վարկերում, ՀՆԱ ավելի արագ աճ են գրանցել, ավելի շատ ներդրումներ կատարել և աշխատաշուկայում ավելի լավ արդյունքներ ունեցել (աշխատուժի մասնակցության ավելի բարձր և գործազրկության ավելի ցածր ցուցանիշներ): Վարկերի աճը նույնպես ավելի արագ է եղել այդ խմբի երկրներում:

Բ. Բեռնանկեն՝ ԱՄՆ-ի ԴՊՀ երկարամյա ղեկավարը, կարծում էր, որ չաշխատող վարկերը, տրամադրված լինելով արժեքավոր գրավի դիմաց, վարկառուի համար դժվարացնում են նոր ֆինանսավորում ստանալը և ներդրումներ կատարելը¹³:

Շատ տնտեսագետ վերլուծաբաններ¹⁴ խնդրահարույց են համարում սպառողական և հիպոտեկային վարկերի տեսակարար կշռի ավելացումն ընդհանուր վարկային պորտֆելում: ՀՀ ԿԲ-ն ևս ֆինանսական կայունության հաշվետվություններում բազմիցս նշել է, որ հիպոտեկային վարկավորման վերջին տարիների աճի բարձր տեմպերը ընդլայնում են այդ շուկայի գերտաքացման ռիսկերը¹⁵, և որ սպառողական վարկերի նվազման ու հիպոտեկային վարկերի բարձր աճի պայմաններում վերջիններիս կշիռը տնային տնտեսությունների վարկային պորտֆելի կառուցվածքում նշանակալի մեծացել է¹⁶:

Որոշ տնտեսագետներ քննարկում են տնային տնտեսությունների պարտքի շարունակական աճը, ներառյալ հիպոտեկային և սպառողական վարկը, մասնավորապես՝ 2008 թ. ֆինանսական ճգնաժամին հաջորդող տարիներին:

¹¹ Տե՛ս **Филиппова А. А.**, Качество кредитного портфеля как фактор стоимости банка. Финансы и кредит, 22 (406), 2010, էջ 47, <https://cyberleninka.ru/article/n/kachestvo-kreditnogo-portfelya-kak-faktor-stoimosti-banka>

¹² Տե՛ս **Balgova M., Nies M. and Plekhanov A.**, The economic impact of reducing nonperforming loans. European Bank for Reconstruction and Development, Working Paper, No. 193, Prepared in October 2016, էջ 1, <https://www.ebrd.com/publications/working-papers/economic-impact.html>

¹³ Տե՛ս **Bernanke B., Gertler M. and Gilchrist S.** (1999), The Financial Accelerator in a Quantitative Business Cycle Framework, in J. Taylor and M. Woodford (eds.), Handbook of Macroeconomics, Volume I, <https://faculty.wcas.northwestern.edu/lchrist/course/Czech/BGG%201999%20Handbook%20chapter.pdf>

¹⁴ Տե՛ս **Ղալայան Ի.**, Հայաստանի բանկային համակարգը, <https://orbeli.am/hy/post/239/2019-06-20/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB+%D5%A2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6+%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8>

¹⁵ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, էջ 9, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2022.pdf

¹⁶ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2021, էջ 8, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2022.pdf

Նրանք մտահոգություն են հայտնում, որ պարտքի բարձր մակարդակը կարող է տնային տնտեսությունները խոցելի դարձնել տնտեսական ցնցումների նկատմամբ: Տնտեսագետ Աթիֆ Միանը¹⁷ քննարկում է Միացյալ Նահանգներում տնային տնտեսությունների պարտքի աճը և դրա հնարավոր հետևանքները ֆինանսական կայունության վրա: Նա կարևորում է վարկավորման խելամիտ գործելակերպի և քաղաքականության անհրաժեշտությունը՝ կանխելու հերթական պարտքային ճգնաժամը:

Ամիր Սուֆիի աշխատանքում ուսումնասիրվում է տնային տնտեսությունների պարտքի, սպառողական ծախսերի և տնտեսական պարբերաշրջանների միջև կապը: Նա պնդում է, որ սպառողների չափազանց մեծ պարտքը կարող է նպաստել տնտեսական անկայունությանը և կոչ է անում այնպիսի քաղաքականություն վարել, որն ուղղված լինի սպառողական վարկային ռիսկերի հիմնական պատճառների վերացմանը¹⁸:

Մասնագիտական գրականության մեջ հիպոտեկային վարկավորման ծավալների առաջանցիկ տեմպերով ավելացման ու դրա բացասական հետևանքների վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ կան: Մասնավորապես՝ քննարկելով ԱՄՆ-ի տնտեսությունում 2008-ին բռնկված ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառները, մասնագետները նշում են, որ 2006 թ-ից մեծ ծավալներով իրականացվող հիպոտեկային վարկավորման մեխանիզմը ժամանակի ընթացքում նմանվեց ֆինանսական բուրգի. բանկերն անընդհատ նոր հիպոտեկային վարկեր էին տրամադրում արագ թանկացող անշարժ գույքի գրավի դիմաց, իսկ վարկառուները վերցնում էին դրանք և օգտագործում այլ նպատակներով: Համաշխարհային տնտեսական ճգնաժամին նախորդող յոթ տարիների ընթացքում, ըստ տարբեր փորձագետների, ՀՆԱ-ում միայն այս գործոնի մասնաբաժինը կազմում էր դրա 60–70%-ը¹⁹: Տնտեսագետները վերլուծել են նաև 2008 թ. ճգնաժամից հետո հիպոտեկային շուկայում կատարված բարեփոխումներն ու փոփոխությունները: Նրանք գնահատում են՝ արդյոք այս բարեփոխումները բարելավել են բնակարանային շուկայի կայունությունը, թե՞ նոր ռիսկեր են ի հայտ եկել: Օրինակ՝ տնտեսագետ Քենեթ Սնոուդենը²⁰ քննարկում է ԱՄՆ-ի բնակարանային շուկայի հետճգնաժամային վերականգնումը և զուգահեռներ անցկացնում մինչև բարեփոխումներն ընկած ժամանակահատվածում հիպոտեկային վարկերի ռիսկայնության և բնակարանային շուկայի կայունության միջև: Տնտեսագետ Մարկ Զանդիի վերլուծությունը կենտրոնանում է վարկային և բնակարանային շուկաների վրա, հատկապես՝ 2008 թ. ֆինանսական ճգնաժամի ժամանակ:

¹⁷ St' u Mian A., Sufi A., Verner E., How do Credit Supply Shocks Affect the Real Economy? Evidence From the United States in the 1980s, Working Papers, https://www.nber.org/system/files/working_papers/w23802/w23802.pdf

¹⁸ St' u Sufi A., Housing, Household Debt, and the Business Cycle: An Application to China and Korea, July 2023, https://www.nber.org/system/files/working_papers/w31489/w31489.pdf

¹⁹ St' u Багинова В.М. и др., Негативное воздействие кредитных механизмов на экономическое развитие. Bulletin USUES. Science, education, economy. Series economy, № 2 (12), 2015, էջ 5, <https://cyberleninka.ru/article/n/negativnoe-vozdeystvie-kreditnyh-mehanizmov-na-ekonomicheskoe-razvitiie>

²⁰ St' u Snowden K., A Historiography of Early NBER Housing and Mortgage Research, <https://www.nber.org/system/files/chapters/c13003/c13003.pdf>

Նա ընդգծում է համապարփակ տնտեսական կանխատեսումների և քաղաքականության միջոցառումների անհրաժեշտությունը՝ ուղղված վարկային և հիպոտեկային շուկայի դիսկերի և ապագա ճգնաժամերի կանխմանը: Զանդին նաև մտահոգություն է հայտնում ԱՄՆ-ում հիպոտեկային բարձր տոկոսադրույքների վերաբերյալ և հույս հայտնում, որ 2024 թվականին կառավարության համապատասխան միջոցառումների շնորհիվ փոքր-ինչ կշտկվի բնակարանային շուկայի անկայուն վիճակը՝ դրական ազդեցություն ունենալով նաև ֆինանսական կայունության վրա²¹:

Հետազոտության մեթոդաբանություն: Մինչ վերլուծություն իրականացնելը՝ քննական ուսումնասիրության են ենթարկվել հետազոտությանը վերաբերող մասնագիտական գրականության մեջ առաջ քաջված տեսակետները, մոտեցումները, մասնագիտական հարթակներում տեսական ու գործնական բնույթի հրապարակումները: Բանկային համակարգի ավանդային և վարկային պորտֆելների ուսումնասիրության համար հիմնականում օգտագործվել են դիտարկման, համեմատության, վիճակագրական, նկարագրական, վերլուծական, դինամիկ, գործոնային, ինչպես նաև մակաձուլության (ինդուլցիայի) և արտաձման (դեդուկցիայի) մեթոդները: ՀՀ առևտրային բանկերի վարկային և ավանդային պորտֆելների ծավալների փոփոխության, կառուցվածքների ձևավորման, դրանց՝ տարբեր գործոնների ազդեցությամբ փոփոխությունների, ավանդների ներգրավման, տնային տնտեսությունների պարտքի բեռի փոփոխությունների, տնտեսական աճի ապահովման տեսական և գործնական բնույթի հարցերի նկարագրության, վերլուծության և մեկնաբանման համար կիրառվել են մասնագիտական գրականության մեջ օգտագործվող հասկացությունների, սահմանումների վերբալ՝ նկարագրական, քննական համեմատության ու ընդհանրացման մեթոդները:

Վերլուծության համար որպես սկզբնաղբյուր ծառայող թվական տվյալները և ցուցանիշները վերցվել են ՀՀ ԿԲ, Համաշխարհային բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների բազաներից: ԿԲ գնաճի, ֆինանսական կայունության, տարեկան հաշվետվություններում ներառված տվյալները նույնպես վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու հիմք են դարձել: Իրականացրել ենք բանկային համակարգի հիմնական ցուցանիշների քանակական վերլուծություն, իսկ տնտեսական կապերի, փոխհարաբերությունների հետազոտության համար՝ նաև որակական վերլուծություն: Քանակական վերլուծություն իրականացնելիս ուսումնասիրվող տվյալները ներկայացվում են վիճակագրական կանոնները հաշվի առնելով: Քանակական վերլուծությամբ, ի թիվս այլ ցուցանիշների, հաշվարկվել, գնահատվել և համեմատության մեթոդի կիրառմամբ համեմատվել են ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի, սպառողական ու հիպոտեկային վարկերի ծավալների և ՀՆԱ իրական ծավալի աճերը, ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի ծավալների աճի միջին տարեկան տեմպը 2012–2023 թթ.: Որակական մեթոդի կիրառումը թույլ է տվել ամբողջական ու մանրամասն նկարագրել վերլուծվող ցուցանիշների

²¹ St' u Mohammed O., Housing Market Needs Two Major Changes to Help Americans, Published Dec 28, 2023, <https://www.newsweek.com/americans-need-2-major-changes-struggling-housing-market-1856236>

փոփոխությունների պատճառներն ու հետևանքները: Հորիզոնական վերլուծության մեթոդի կիրառմամբ իրականացվել է առևտրային բանկերի ավանդների ծավալների փոփոխությունների, ՀՀ առևտրային բանկերի կողմից, ըստ ոլորտների, ռեզիդենտներին տրված ընդհանուր վարկերի ծավալների փոփոխությունների վերլուծություն, որը ներառել է նաև դինամիկ հետազոտության մեթոդի կիրառումը: Հաշվարկվել և վերլուծվել են առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին, ըստ ոլորտների, տրված վարկերի տեսակարար կշիռները, ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերում տնտեսության իրական հատվածի հիմնական չորս ոլորտներին տրամադրված վարկերի գումարային ծավալների և հիպոտեկային ու սպառողական վարկերի գումարային ծավալների տեսակարար կշիռների փոփոխությունները, ՀՀ տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտների բաժինը ՀՆԱ-ում և իրական հատվածի հիմնական ոլորտներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռները, այլ ցուցանիշներ: Ուսումնասիրության վիզուալացման նպատակով կառուցվածքային բնույթ ունեցող ցուցանիշների փոփոխությունները ներկայացվել են գծապատկերների և աղյուսակների տեսքով:

Վերլուծություն: 2022 թ. բանկային համակարգի շահույթը եղել է աննախադեպ բարձր՝ 262,4 մլրդ ՀՀ դրամ (ROE 21.7%)²², ինչը 4 անգամ ավելի էր, քան 2021 թ. արձանագրված արդյունքը՝ 65,5 մլրդ ՀՀ դրամ (ROE 7%): 2023 թ. բանկային համակարգում արձանագրված շահույթը 12%-ով պակաս էր, քան 2022 թ. և կազմել է 230 մլրդ ՀՀ դրամ²³: 2022–2023 թթ. ՀՀ բանկային համակարգի հուսալիությունն էականորեն բարելավվել է, զուտ շահույթի 25%-ը վճարվել է շահաբաժնի տեսքով՝ 122 մլրդ ՀՀ դրամի չափով, իսկ մնացածը մնացել է բանկերի կապիտալում: Միևնույն ժամանակ, վերջին երկու տարիների ընթացքում ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելը ավելացել է գրեթե 25%-ով և այժմ կազմում է գրեթե 12.4 մլրդ ԱՄՆ դոլար²⁴:

ՀՀ առևտրային բանկերում ներդրված ավանդների ծավալներն անընդհատ ավելացել են (աղյուսակ 1): 2023 թ., 2018 թ. նկատմամբ (դեկտեմբերը՝ դեկտեմբերի նկատմամբ) աճը կազմել է 1.92 անգամ, 2022 թ. նկատմամբ՝ 10.8 տոկոս: Ավանդների ավելացմանը նպաստել են ամբողջական եկամուտների ավելացումը (ՀՆԱ ավելացումը), համավարակի, պատերազմի և աշխարհաքաղաքական այլ զարգացումների պայմաններում անորոշությունների աճը, ինչն առաջացրեց որոշ սպառողական ծախսերի կրճատումներ կամ հետաձգումներ՝ ավելացնելով խնայողությունները բանկերում: Ավանդների ընդամենը ծավալների ավելացմանը նպաստեց նաև մեր երկիր արտասահմանից ժամանածների (մեր հայրենակիցների և օտարերկրացիների) խնայողությունների տեղաբաշխումը ՀՀ առևտրային բանկերում: 2023 թ. ընդամենը ավանդների 21.3 տոկոսը բաժին է ընկնում ձեռնարկություններին, 45.8 տոկոսը՝ տնային տնտեսություններին:

²² Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, էջ 2, https://www.cba.am/AM/periodicals/Stability_Report_2022.pdf

²³ Տե՛ս Մելիքյան Ռ., 2024-ը կարող է լինել բավականին բարենպաստ տարի ՀՀ բանկերի համար, <https://banks.am/am/news/interviews/27252>

²⁴ Տե՛ս Ֆինանսական կայունության հաշվետվություն 2022, ՀՀԿԲ, https://www.cba.am/AM/periodicals/Stability_Report_2022.pdf

2023 թ. ռեզիդենտներից դրամով ներգրավված ավանդները կազմում են ընդամենը ավանդների 45 տոկոսը՝ 2018 թ. 36 տոկոսի փոխարեն, ինչը փաստում է դրամի նկատմամբ վստահության աճի մասին: Տնային տնտեսությունների՝ դրամով ցպահանջ ավանդները 2023-ին կազմել են առևտրային բանկերի՝ ռեզիդենտներից դրամով ներգրավված ավանդների գրեթե 20 տոկոսը, ընդամենը ավանդների՝ 8.9 տոկոսը, իսկ տնային տնտեսությունների ընդամենը ցպահանջ ավանդները՝ ընդամենը ավանդների 17.7 տոկոսը: 2018-ին այս ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 15.6, 5.6 և 10.8 տոկոս: Սա ցույց է տալիս, որ տնային տնտեսությունները դիտարկվող ժամանակահատվածում ավելացրել են ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը, ինչը նշանակում է, որ աշխարհաքաղաքական անորոշությունների նկատելի աճը նրանց ավելի զգուշավոր է դարձրել: Տնային տնտեսությունների և՛ դրամով, և՛ արտարժույթով ժամկետային ավանդները նույնպես տարեցտարի ավելացել են: Դրանց գումարային ծավալը 2023 թ. կազմել է 1596.7 մլն դրամ՝ ընդամենը ավանդների 28 տոկոսը:

Աղյուսակ 1


Առևտրային բանկերի ավանդների ծավալների փոփոխությունները, մլն դրամ, դեկտեմբեր, ժամանակաշրջանի վերջ²⁵

	2018	2019	2020	2021	2022	2023
Առևտրային բանկերի ավանդները ռեզիդենտներից՝ դրամով	1,063,407	1,381,116	1,539,034	1,831,534	2,082,471	2,564,392
Ցպահանջ՝ ձեռնարկություններից	174,009	221,195	247,968	344,375	516,389	635,693
Ցպահանջ՝ տնային տնտեսություններից	166,176	208,635	252,438	293,354	372,527	504,473
Ժամկետային՝ ձեռնարկություններից	81,779	133,472	137,621	168,732	161,712	197,505
Ժամկետային՝ տնային տնտեսություններից	433,503	557,708	574,543	663,893	665,693	833,799
Առևտրային բանկերի ավանդները ռեզիդենտներից՝ արտարժույթով	1,184,148	1,140,413	1,136,033	1,313,436	1,611,624	1,755,887
Ցպահանջ՝ ձեռնարկություններից	361,299	138,247	154,044	205,097	348,323	292,905
Ցպահանջ՝ տնային տնտեսություններից	151,970	166,031	203,193	233,960	367,056	500,209
Ժամկետային՝ ձեռնարկություններից	80,463	47,519	64,964	68,342	77,719	80,376
Ժամկետային՝ տնային տնտեսություններից	712,163	727,301	631,764	717,901	708,395	762,866
Ընդամենը ավանդներ	2,957,296	3,568,207	3,709,020	4,024,616	5,122,579	5,677,166

Ձեռնարկությունների՝ դրամով ցպահանջ ավանդների ծավալները դիտարկվող ժամանակահատվածում անընդհատ ավելացել են, դրանց տեսակարար կշիռը առևտրային բանկերի ռեզիդենտներից դրամով ներգրավված ավանդների ծավալում 2018 թ. կազմել է 16.4 տոկոս, 2023 թ.՝ 24.8 տոկոս, ավելացել են նաև ձեռնարկությունների՝ դրամով ժամկետային ավանդների

²⁵ ԿԲ կայքէջ, Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

ծավալները, որոնց տեսակարար կշիռը, սակայն, առևտրային բանկերի ռեզիդենտներից դրամով ներգրավված ավանդների ծավալում և՛ 2018-ին, և՛ 2023-ին կազմել է գրեթե 7.7 տոկոս: ՀՀ ձեռնարկություններից դրամով և արտարժույթով ներգրավված ժամկետային ավանդների գումարային ծավալը 2018 թ. կազմել է 162.3 մլն դրամ, 2023 թ.՝ 277.9 մլն դրամ, աճը կազմել է 70 տոկոսից ավելի: Ձեռնարկությունների դեպքում ևս տեսնում ենք, որ դրամով ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը նկատելիորեն գերազանցում է դրամով ժամկետային ավանդների տեսակարար կշիռը:



Գծապատկեր 1. ՀՀ առևտրային բանկերի՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դրամով ներգրավված երկարաժամկետ (մեկ փարուց ավելի ժամկետով) ավանդների տոկոսադրույքները 2012–2023 թթ. (վերջի դրությամբ)²⁶

Ուսումնասիրվող ժամանակահատվածում դրամով ներգրավված երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքները մշտապես գերազանցել են ԱՄՆ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքներին (գծապատկեր 1): Նկատվում է հետաքրքիր մի օրինաչափություն. եթե 2018–2019 թթ. ազգային արժույթով և արտարժույթով ներգրավված երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքները զուգընթաց նվազում են, ապա 2019 թ-ից մինչև 2023 թ. ԱՄՆ դրամով ներգրավված երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքներն աստիճանաբար նվազում են, իսկ դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները՝ ավելանում: 2023 թ-ի դեկտեմբերի վերջի դրությամբ ազգային արժույթով ներգրավված երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքները մոտ 6 տոկոսային կետով գերազանցում են արտարժույթով ներգրավված երկարաժամկետ ավանդների տոկոսադրույքներին: Պետք է նշել, որ կարճաժամկետ ավանդների միջին տոկոսադրույքը (մինչև 1 տարի ժամկետով՝ բացառությամբ ցպահանջի) ավելի ցածր է, քան երկարաժամկետինը և՛ դրամով, և՛ ԱՄՆ դրամով ներգրավված ավանդների դեպքում՝ միջինը 2 տոկոսային կետով: Եթե դիտարկենք ռեզիդենտներից դրամով և արտարժույթով ներգրավված ավանդների ծավալների աճը, ապա կնկատենք, որ դրամով ներ-

²⁶ Գծապատկերը կառուցվել է *Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ* աղյուսակի հիման վրա, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

գրավվածի համար միջին տարեկան աճը (դեկտեմբերը՝ դեկտեմբերի նկատմամբ) 2018–2023 թթ. կազմել է 19 տոկոս, իսկ արտարժույթով ներգրավվածների համար՝ 9 տոկոս, ինչը համահունչ է տոկոսադրույքների փոփոխություններին:

Բերված տվյալները մեկ անգամ ևս փաստում են, որ տնային տնտեսությունները, որոնց եկամուտները հաշվարկվում են դրամով, գործունեություն են ծավալում դրամային չափողականության համակարգում, իսկ ահա շահույթներ ստացող սուբյեկտները՝ ձեռնարկությունները, իրենց բիզնես և սպառողական պլանները կառուցում են բացառապես դոլարային չափողականության համակարգում: Նմանատիպ վարքագծային դրսևորումները Հայաստանում դոլարայնացման բարձր մակարդակը պայմանավորող կարևորագույն գործոն են:


Աղյուսակ 2

«Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների (դեկտեմբերի վերջ, մլն ՀՀ դրամ)»²⁷

Վարկեր	2018	2019	2020	2021	2022	2023
Ռեզիդենտներին	2,890,387	3,411,640	3,941,237	3,771,429	4,004,921	4,880,830
Դրամով	1,331,570	1,728,922	3,941,237	2,120,538	2,579,551	3,212,552
Արտարժույթով	1,558,817	1,682,718	1,951,385	1,650,891	1,425,370	1,668,278
Ձեռնարկություններին	1,534,903	1,635,739	1,993,177	1,845,649	1,794,729	2,197,682
Դրամով	347,196	384,973	504,141	564,142	684,641	873,583
Մասնավոր	343,384	381,797	499,989	562,007	680,453	867,487
Պետական	3,812	3,176	4,151	2,135	4,188	6,096
Արտարժույթով	1,187,707	1,250,766	1,489,036	1,281,507	1,110,088	1,324,099
Մասնավոր	1,175,093	1,237,889	1,476,335	1,281,404	1,110,079	1,323,889
Պետական	12,614	12,877	12,701	103	9	210
Տնային տնտեսություններին²	1,139,007	1,503,093	1,660,335	1,740,064	2,017,178	2,402,703
Դրամով	844,333	1,160,058	1,286,688	1,414,530	1,743,675	2,122,357
Արտարժույթով	294,674	343,036	373,647	325,535	273,503	280,346
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	119,580	120,389	106,790	13,000	15,859	11,071
Դրամով	66,574	74,437	59,664	4,600	11,425	6,116
Արտարժույթով	53,006	45,951	47,126	8,400	4,434	4,955
Այլ ֆինանսական կազմակերպություններին	96,898	152,419	180,936	172,716	177,155	269,374
Դրամով	73,467	109,454	139,360	137,266	139,811	210,496
Արտարժույթով	23,431	42,965	41,576	35,450	37,344	58,878
Ոչ ռեզիդենտներին³	238,184	245,371	240,562	196,122	204,516	269,779
Դրամով	45,555	64,867	88,782	92,844	102,828	104,073
Արտարժույթով	192,629	180,504	151,780	103,278	101,688	165,706
Ընդամենը վարկեր	3,128,570	3,657,011	4,181,799	3,967,551	4,209,437	5,150,609

²⁷ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների (ժամանակահատվածի վերջ, մլն ՀՀ դրամ), <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Աղյուսակում 2-ում ներկայացված է ըստ տնտեսության հատվածների առևտրային բանկերի տրամադրած վարկերի ծավալների շարժընթացը: Բանկերի կողմից տրամադրված վարկերի աճը (ամրագրված փոխարժեքով) 2022 թ., նախորդ տարվա համեմատությամբ, կազմել է 15.5%, ՀՀ դրամի արժևորման արդյունքում վարկերի դրամային համարժեքն աճել է ընդամենը 5.5%-ով: 2023 թ., 2022 թ. նկատմամբ, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ավելացել է 1.22 տոկոսով, ձեռնարկություններին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը՝ 22 տոկոսով, տնային տնտեսություններին տրամադրված վարկերինը՝ 19 տոկոսով: Եթե 2022 թ., 2018 թ. նկատմամբ, ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ավելացել է 69 տոկոսով, ձեռնարկություններին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը՝ 43 տոկոսով, ապա տնային տնտեսություններին տրամադրված վարկերինը՝ 2.1 անգամ:




Գծապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների (ժամանակաշրջանի վերջ, մլն դրամ)²⁸

ՀՀ տնտեսության իրական հատվածին՝ արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, շինարարությանը, տրանսպորտին և կապին տրամադրված վարկերի գումարային ծավալները 2019 թ. դեկտեմբերի վերջին կազմել են ավելի քան 943 մլրդ դրամ, 2022 թ. դեկտեմբերի դրությամբ՝ գրեթե 1.2 տրիլիոն, իսկ արդեն 2023 թ.՝ մոտ 1.4 տրիլիոն դրամ: Արդյունքում՝ 2019 թ. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերում տնտեսության իրական հատվածի հիմնական չորս ոլորտներին տրամադրված վարկերի գումարային ծավալների տեսակարար կշիռը կազմել է 29 տոկոս, 2022 թ.՝ 32.2 տոկոս, 2023 թ.՝ ավելի քան 29.87 տոկոս²⁹ (գծապատկեր 2): Ինչպես նկատում ենք, ուսումնասիրության վերջին տարում

²⁸ ՀՀ ԿԲ, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>
²⁹ Հաշվարկները կատարել են հեղինակները ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների աղյուսակի տվյալների հիման վրա, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

քննարկվող ցուցանիշը նվազել է նախորդ տարվա համեմատությամբ:

Դա պայմանավորված է տրանսպորտի և կապի ոլորտին տրամադրված վարկերի ծավալների՝ նախորդ տարվա համեմատությամբ նկատելի՝ մոտ 10 մլրդ դրամով նվազմամբ և ընդհանուր վարկերի ծավալի նկատելի ավելացմամբ՝ ավելի քան 820 մլրդ դրամով: Պետք է նշել՝ թեև իրական հատվածի մյուս երեք ոլորտներին տրամադրված վարկերը նույնպես ավելացել են, բայց դա բավարար չի եղել, որ իրական հատվածի հիմնական չորս ոլորտներին տրամադրված վարկերի գումարային ծավալների տեսակարար կշիռը չնվազի (գծապատկեր 3): 2023 թ., 2019 թ. նկատմամբ, արդյունաբերությանը տրամադրված վարկերը մյուս ոլորտների համեմատությամբ ամենափոքր չափով են ավելացել՝ ընդամենը 1.5 տոկոսով, գյուղատնտեսությանը տրամադրված վարկային միջոցների աճը նույն ժամանակահատվածում կազմել է մոտ 80 տոկոս, շինարարությանը՝ 2.5 անգամ, սպառողական վարկերինը՝ 18.5 տոկոս, իսկ հիպոտեկային վարկերինը՝ մոտ երեք անգամ³⁰: Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը նպաստել են, որ ոլորտում ավելանան նաև վարկառուների թիվը և գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը:




Գծապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերում տնտեսության իրական հատվածի հիմնական չորս ոլորտներին տրամադրված վարկերի գումարային ծավալների և հիպոտեկային ու սպառողական վարկերի գումարային ծավալների տեսակարար կշիռների փոփոխությունները³¹

Վերլուծենք ՀՀ տնտեսության իրական հատվածում վարկերի տեղաբաշխումն ըստ ոլորտների՝ ճյուղային անհամամասնությունները բացահայտելու նպատակով: Վերջին հինգ տարիներին արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում միջինում կազմել է 18.5 տոկոս, գյուղատնտեսության բաժինը՝ մոտ 11 տոկոս, շինարարությանը՝ մոտ 7 տոկոս, հանքարդյունաբերությանը՝ 3.5 տոկոս, մշակող արդյունաբերությանը՝ մոտ 11.5 տոկոս: 2023 թ. դեկտեմբերի վերջի դրու-

³⁰ Հաշվարկները կատարել են հեղինակները:
³¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակների հաշվարկների հիման վրա:

թյամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի գրեթե 11 տոկոսը բաժին է ընկել արդյունաբերությանը, մոտ 6 տոկոսը՝ գյուղատնտեսությանը, 10.8 տոկոսը՝ շինարարությանը, 1.4 տոկոսը՝ հանքարդյունաբերությանը, 5.37 տոկոսը՝ մշակող արդյունաբերությանը³²: Վերլուծված տվյալներից երևում է, որ տնտեսության իրական հատվածում վարկավորման տեսանկյունից առկա են որոշ անհամամասնություններ, մասնավորապես՝ տնտեսության իրական հատվածի երկու կարևոր ոլորտների՝ արդյունաբերության և գյուղատնտեսության գումարային բաժինը ՀՆԱ-ում կազմում է մոտ 30 տոկոս, այնինչ այդ ոլորտներին բաժին է ընկնում ընդհանուր վարկերի միայն 17 տոկոսը: Մշակող արդյունաբերությանը տրամադրված վարկերի բաժինը նույնպես նկատելիորեն քիչ է այդ ոլորտի՝ ՀՆԱ-ում ունեցած տեսակարար կշռից՝ գրեթե 2 անգամ:




Գծապատկեր 4. ՀՀ տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտների բաժինը ՀՆԱ-ում և իրական հատվածի հիմնական ոլորտներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռները (%), 2023 թ.

ՀՀ բանկային համակարգում արձանագրված դրսևորումներից է սպառողական և հիպոտեկային վարկերի ծավալների և ընդհանուր վարկերում դրանց բաժինների մեծացումը: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերում սպառողական և հիպոտեկային վարկերի տեսակարար կշիռների ավելացումը ֆինանսական կայունության տեսանկյունից ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Դրական կարելի է համարել այն, որ սպառողական վարկավորման շնորհիվ բանկը հնարավորություն ունի ստանալու բավարար եկամուտներ, համալրելու հաճախորդների բազան և բազմազանեցնելու ռիսկերը՝ տարբեր վարկային

³² Հաշվարկները կատարել են հեղինակները ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերն ըստ ոլորտների աղյուսակի (<https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>), ՀՆԱ արտադրության կառուցվածքի (S9SՀԴ խմբ. 2 դասակարգմամբ) նյութերի (<https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>) հիման վրա:

պրոդուկտների գծով ծառայություններ մատուցելու պայմաններում: Դրական է նաև այն, որ սպառողական վարկավորումը, լինելով առևտրային բանկի կարևոր գործառույթներից, համեմատաբար կարճաժամկետ է, ինչը նշանակում է վարկի չմարման նվազագույն ռիսկ: Բացի այդ, անկայուն տնտեսության պայմաններում սպառողական վարկը տրամադրվում է բարձր տոկոսադրույքով, ինչը թույլ է տալիս բանկին ավելի բարձր շահույթ ստանալ: Բացասական կարելի է համարել այն հանգամանքը, որ սպառողական վարկերի ծավալների արագ ավելացումը կարող է հանգեցնել առևտրային բանկերի խոցելիության մակարդակի բարձրացման, քանի որ, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, ընդհանուր բարեկեցության կամ վարկառուի բարեկեցության հնարավոր վատթարացման, աշխատանքի և եկամտի կորստի պատճառով կարող են ավելանալ ժամկետանց պարտքերի ծավալն ու տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, սպառողական վարկավորման ծավալների մեծացումը ավելացնում է տնային տնտեսությունների պարտքային բեռը. սպառողական վարկերի սպասարկումը նվազեցնում է տնային տնտեսության այլ կարևոր ապրանքների ձեռքբերման համար անհրաժեշտ ընթացիկ եկամուտները, նվազում են նաև սպառողական, այնուհետև՝ ամբողջական պահանջարկը, խնայողությունները, ապա՝ ներդրումները: Այս ամենը բացասական ազդեցություն է ունենում տնտեսական աճի և զարգացման վրա:

Պետք է նշել՝ եթե սպառողական վարկերը դրականորեն են ազդում սպառողական ծախսերի ավելացման վրա, ապա հիպոտեկային վարկերը նպաստում են ներդրումային ծախսերի ավելացմանն ու երկուսն էլ, ըստ էության, կարևոր են ՀՆԱ ավելացման տեսանկյունից: Սակայն կարևոր է ընդգծել, որ սպառողական վարկերի զգալի մասն ավելացնում է սպառողական պահանջարկը ներմուծվող ապրանքների նկատմամբ, հետևաբար՝ նպատակաուղղվում է ներմուծվող ապրանքների ձեռքբերմանը, այսինքն՝ սպառողական վարկերը ողջ ծավալով չէ, որ նպաստում են ՀՆԱ ավելացմանը:



Գծապատկեր 5. Առևտրային բանկերի ռեզիդենտներին տրամադրած վարկերի ծավալների փոփոխությունները (դեկլինները՝ նախորդ տարվա դեկլինների նկատմամբ, տոկոս)³³

³³ Հաշվարկները կատարել են հեղինակները ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ՀՀ դրամով վարկերն ըստ ոլորտների ցուցանիշների հիման վրա, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

«Վ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի ծավալների աճի միջին տարեկան տեմպը 2012–2023 թթ. կազմել է ավելի քան 22%, սպառողական և հիպոտեկային վարկերինը՝ մոտ 20%, այն դեպքում, երբ ՀՆԱ իրական ծավալի աճի միջին տարեկան տեմպը նույն ժամանակահատվածում կազմել է 5.8%-ից մի փոքր պակաս: Նախկինում կատարված հետազոտության արդյունքներով կարող ենք եզրակացնել, որ «Վ-ում դրամային վարկերի ծավալների աճն ընդհանուր առմամբ նշանակալի դրական ազդեցություն է ունենում իրական ՀՆԱ աճի վրա, սակայն առանձին վարկատեսակների դեպքում ազդեցության չափերը տարբեր են:

Ընդհանուր դրամային վարկերի 1 տոկոսային կետով աճի արագացումը հանգեցնում է իրական ՀՆԱ աճի 0.05 տոկոսային կետով արագացման: Սակայն հիպոտեկային և սպառողական վարկերի աճը ՀՆԱ-ի վրա ավելի փոքր ազդեցություն է ունենում. համապատասխանաբար՝ 0.008 և 0.026 տոկոսային կետ³⁴:

Վերջին տարիներին հիպոտեկային վարկերի ծավալների անընդհատ ավելացումը պայմանավորված է մի քանի գործոնով՝ եկամտային հարկի չափով տոկոսավճարների հետվերադարձի պետական ծրագրի գործողությամբ, այդ ծրագրի նախատեսվող փուլային դադարեցմամբ, օտարերկրացիների և Արցախից մեր հայրենակիցների ավելացած ներհոսքի հետևանքով անշարժ գույքի գների և վարձավճարների բարձրացմամբ: Հիպոտեկային վարկերի ծավալը 2021 թ. կազմել է ՀՆԱ մոտ 11 տոկոսը, իսկ 2023 թ.՝ մի փոքր ավելի՝ 11.3 տոկոսը:

Սպառողական վարկերի նկատմամբ պահանջարկը 2021 թ., 2020 թ. համեմատությամբ նվազել էր գրեթե 12 տոկոսով: 2022–2023 թթ. սպառողական վարկերի ծավալները նախորդ տարիների համեմատությամբ ավելացել են. 2023-ին դրանց ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 11.4 տոկոս:

2020–2023 թթ. ակտիվացել են ոչ ռեզիդենտների հոսքերը մեր երկիր, ինչը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտությամբ: Նշված միգրացիան առաջացրել է ֆինանսական կայունության տեսանկյունից ուշադրության արժանի մի խնդիր, որը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. բանկային համակարգում «Վ ռեզիդենտներին տրամադրվող արտարժույթային վարկերը 2020–2022 թթ. աստիճանաբար նվազել են (այս միտումը 2023 թ. չի պահպանվել. ռեզիդենտներին տրամադրվող արտարժույթային վարկերը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են), իսկ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների արտարժույթային ավանդների գումարային ծավալը նշված ժամանակահատվածում տարեցտարի ավելացել է: Ընդ որում, եթե արտարժույթով ավանդների ծավալները ոչ ռեզիդենտներից այդ տարիներին դրսևորել են փոփոխական վարքագիծ՝ նախորդ տարվա նկատմամբ մերթ ավելացել, մերթ նվազել են, ապա ռեզիդենտների արտարժույթային ավանդները 2020 թ-ից մինչ այսօր անընդհատ են ավելացել:

³⁴ Տե՛ս «Վ առևտրային բանկերի վարկային պորտֆելի կառուցվածքի փոփոխությունների ռիսկային դրսևորումները, «Երիտասարդ գիտնական» գիտական հոդվածների ժողովածու, էջ 44-46, <https://asue.am/upload/files/science/ugy-41.pdf>

Աղյուսակ 3


Առևտրային բանկերի արտարժույթով տրամադրված վարկերի ծավալների և արտարժույթով ներգրավված ավանդների ծավալների փոփոխությունները (դեկտեմբեր, ժամանակաշրջանի վերջ)³⁵

	2017	2018	2019	2020	2021	2022	2023
Առևտրային բանկերի վարկերը՝ ռեզիդենտներին՝ արտարժույթով, մլն դրամ	1,518,183	1,558,817	1,682,718	1,951,385	1,695,597	1,425,370	1,668,278
Առևտրային բանկերի ավանդները՝ ոչ ռեզիդենտներից՝ արտարժույթով, մլն դրամ	412,998	603,382	915,207	884,067	698,981	1,213,215	1,111,290
Առևտրային բանկերի ավանդները՝ ռեզիդենտներից՝ արտարժույթով, մլն դրամ	1,172,769	1,184,148	1,140,413	1,136,033	1,313,436	1,611,624	1,755,887
Առևտրային բանկերի վարկերը, ընդամենը, մլն դրամ	2,684,582	3,128,570	3,657,011	4,181,799	3,967,551	4,209,437	5,150,609
Առևտրային բանկերի ավանդները, ընդամենը, մլն դրամ	2,624,592	2,957,296	3,568,207	3,709,020	4,024,616	5,122,579	5,677,166

2017 թ. ՀՀ ռեզիդենտներին արտարժույթով տրամադրված վարկերը կազմել են վարկերի ողջ ծավալի մոտ 57%-ը, 2020 թ.՝ 46.7%-ը, իսկ 2023 թ.՝ 32.4%-ը, այսինքն՝ դրանց տեսակարար կշիռը վեց տարում նվազել է գրեթե 25 տոկոսային կետով:

Դիտարկվող ողջ ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված արտարժույթային ավանդների ծավալները միասին նկատելիորեն գերազանցում են ՀՀ ռեզիդենտներին տրամադրված արտարժույթային վարկերի ծավալները: Այսպես՝ 2023 թ. դեկտեմբերի վերջի տվյալներով երկրի ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը կազմում է գրեթե 2.9 տրիլիոն դրամ, այն դեպքում, երբ ՀՀ ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված արտարժույթային վարկերի ծավալները՝ ընդամենը 1.8 տրիլիոն դրամ: 2017–2023 թթ. ՀՀ ռեզիդենտներին տրամադրված արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը ընդամենը վարկերում տարեցտարի նվազում է, իսկ ՀՀ ռեզիդենտների արտարժույթային ավանդների տեսակարար կշիռն ամենաբարձրը լինելով 2017 թ.՝ 44.7 տոկոս, 2019–2023 թթ. գրեթե կայունացել է 30-32 տոկոսի շուրջ:

³⁵ Աղբյուրը՝ Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալներ (ամսական), Առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ծավալներ (ամսական) աղյուսակներ, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>



Գծապատկեր 6. Առևտրային բանկերի ՀՀ ունեցողներին տրամադրած արտարժույթային վարկեր/ընդամենը վարկեր և արտարժույթային ավանդներ/ընդամենը ավանդներ ցուցանիշների շարժընթացը 2017–2023 թթ. (տվյալ տարվա դեկտեմբերը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)³⁶

Ոչ ունեցողներին, ըստ ՀՀ կենտրոնական բանկի, իրացվելիության ռիսկի գործոններից մեկն է, ուստի մոտ ապագայում այն կարող է ներառվել իրացվելիության գծով մակրոպարուզենցիալ պահանջների մեջ³⁷: Ֆինանսական կայունության տեսանկյունից կարող է լուրջ վտանգ ներկայացնել այն իրավիճակը, երբ ոչ ունեցողները որոշեն զանգվածաբար հանել իրենց արտարժույթային ավանդները: Օրինակ՝ Վրաստանի ազգային բանկն այս երևույթից պաշտպանվելու նպատակով Վրաստանի ոչ ունեցողներին, մասնավորապես՝ ռուսաստանցիների համար 2023 թ. սեպտեմբերի 1-ից արտարժույթով ավանդների և հաշիվների արտահոսքի գործակիցը 30-40 տոկոսից հասցրեց 80 տոկոսի՝ դա բացատրելով այն մտավախությամբ, որ ոչ ունեցողների արտարժույթային միջոցների ներհոսքը «կարող է ժամանակավոր լինել»: Վրացական Business Media Georgia լրատվամիջոցը 2022 թ. դեկտեմբերի դրությամբ ռուսաստանցիների միջոցների չափը վրացական բանկերում գնահատել է 2,42 միլիարդ լարի (ավելի քան 969 միլիոն ԱՄՆ դոլար): Տարվա ընթացքում դրանք աճել են 327%-ով³⁸: 2024 թ. փետրվարին Վրաստանի ազգային բանկը 80%-ից 40%-ի է իջեցրել ռուսաստանցիների՝ արտարժույթով ավանդների այն մասնաբաժինը, ինչը հնարավոր չէ անհապաղ պահանջել: Վրացական մեգակարգավորողն ընդգծել է, որ միջնաժամկետ հեռանկարում ռուսաստանցիների հաշիվներից էական արտահոսք չի սպասվում³⁹: Արդեն

³⁶ Տե՛ս նույն աղբյուրը:
³⁷ Տե՛ս **Петрова Ю.**, ЦБ Армении задумался о повышении норматива ликвидности по депозитам иностранцев, редакция Forbes, <https://www.forbes.ru/finansy/491350-cb-armenii-zadumalsa-o-povyshenii-normativa-likvidnosti-po-depozitam-inostrancev>
³⁸ Տե՛ս նույն աղբյուրը:
³⁹ Տե՛ս Нацбанк Грузии смягчил требования по банковским вкладам для россиян, РБК, Финансы, 16 фев. 2024 г., <https://www.rbc.ru/finances/16/02/2024/65cf77cf9a7947815ec13ef6>

2023 թ. հուլիսից Հայաստանի կենտրոնական բանկը «մտածում է Հայաստանի բանկերի նկատմամբ տնտեսական նորմատիվային պահանջները խստացնելու մասին՝ նախորդ տարի ոչ ռեզիդենտներից միջոցների աննախադեպ ներհոսքի ֆոնին»։ Այս մասին ասվում է հանրապետության կարգավորող մարմնի մամուլի ծառայության պատասխանում՝ Forbes-ի հարցմանը⁴⁰։

2017 թ. (դեկտեմբերի վերջ) ռեզիդենտների՝ արտարժույթով ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը ռեզիդենտներից արտարժույթով ներգրավված բոլոր ավանդների ծավալում կազմել է ընդամենը 29.7%։ 2022 թ. հունվարի վերջին քննարկվող ցուցանիշը կազմել է 36.4%, դեկտեմբերին՝ 48,95%։

Աղյուսակ 4

«Հ առևտրային բանկերի ռեզիդենտներից ներգրավված արտարժույթային ավանդների ծավալների փոփոխությունները (դեկտեմբեր, ժամանակաշրջանի վերջ), մլն դրամ»⁴¹

	2018	2022	2023
Ռեզիդենտներից արտարժույթով ավանդներ	1,184,148	1,611,624	1,755,887
Ռեզիդենտներից արտարժույթով ցպահանջ ավանդներ	361,299	788,903	868,570
Ռեզիդենտներից արտարժույթով ժամկետային ավանդներ	822,850	822,721	887,318

Վերջին հինգ տարիներին ռեզիդենտների՝ արտարժույթով ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը մեծացել է գրեթե 20 տոկոսային կետով, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական կայունության հետ կապված լարվածության։ Ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկը հետևյալն է. եթե դրամի փոխարժեքն իջնի այս կամ այն արտարժույթի նկատմամբ՝ արտաքին կամ ներքին գործոնների փոփոխությամբ պայմանավորված, ապա առևտրային բանկերի ավանդային պորտֆելում արտարժույթային ավանդների մեծ ծավալի և վարկային պորտֆելում արտարժույթային վարկերի ոչ մեծ ծավալի հարաբերակցությունը, ինչպես նաև արտարժույթով ներգրավված ցպահանջ ավանդների մեծ տեսակարար կշիռը կարող են անկայունացնել բանկային համակարգը։

Ֆինանսական կայունության տեսանկյունից բանկային համակարգում կարող է լարվածություն նկատվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ տնային տնտեսություններին տրամադրված հիպոտեկային և սպառողական վարկերի ծավալներն աստիճանաբար ավելանում են, դրանց սպասարկման ճնշումը տնային տնտեսությունների վրա աճում է, իսկ տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների ավելացումը հետ է մնում վարկերի սպասարկման համար անհրաժեշտ միջոցների ավելացման տեմպից։ Քանի որ հիպոտեկային վարկերի ժամկետայնությունը համեմատաբար մեծ է, տոկոսադրույքները՝ համեմատաբար ցածր, իսկ տնային տնտեսություններին տրված վարկերի մեջ ավելանում է հիպոտեկային վար-

⁴⁰ **Петрова Ю.**, ЦБ Армении задумался о повышении норматива ликвидности по депозитам иностранцев, редакция Forbes, <https://www.forbes.ru/finansy/491350-cb-armenii-zadumalsa-opovysenii-normativa-likvidnosti-po-depozitam-inostrancev>

⁴¹ Աղբյուրը՝ Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հարվածների աղյուսակի տվյալներ, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

կերի տեսակարար կշիռը, ապա տնային տնտեսությունների պարտավորությունների փոփոխությունները որոշ չափով նվազեցնում են դրանց պարտքային բեռը:

Աղյուսակ 5

Հիպոտեկային և սպառողական վարկերի ու տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտների շարժընթացը⁴²

	2018	2019	2020	2021	2022	2023
Հիպոտեկային վարկեր, մլն դրամ	255,209	358,760	481,212	654,668	849,396	1,073,817
Սպառողական վարկեր, մլն դրամ	701,123	915,918	929,042	824,837	895,461	1,085,700
Հիպոտեկային վարկերի և սպառողական վարկերի տեսակարար կշիռը ընդամենը վարկերում, տոկոս	34.0	39.0	37.8	41.0	46.0	46.7
Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտներ, դրամ	61047	61076	71182	76058	74021	80460*

* Հաշվարկել են հեղինակները՝ 2022 թ. տվյալը բազմապատկելով 2023 թ. տնտեսական աճի տեմպի ցուցանիշով:

Այսպես՝ 2018 թ. նկատմամբ 2023 թ. հիպոտեկային վարկերն ավելացել են գրեթե 4.2 անգամ, տարեկան միջին աճը կազմել է ավելի քան 80%, սպառողական վարկերը նույն ժամանակահատվածում ավելացել են 1.5 անգամ՝ տարեկան միջին հաշվով ավելանալով ավելի քան 30%-ով: Նույն ժամանակահատվածում տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտներն ավելացել են համապատասխանաբար՝ 1.3 անգամ և մոտ 26%-ով: Սակայն տնային տնտեսությունների պարտքային բեռի ավելացման ռիսկը բարձր է մնում, քանի որ, օրինակ՝ հիպոտեկային վարկի աճի տեմպը շարունակում է բարձր մնալ տնային տնտեսությունների եկամուտների աճի տեմպից: Միևնույն ժամանակ, ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ 2018–2023 թթ., տնային տնտեսությունների սպառողական ծախսերն ավելացել են գրեթե 25%-ով, իսկ արտասահմանից ստացվող տրանսֆերտները, որոնց մի մասը տնային տնտեսությունները կարող էին ուղղել վարկերի սպասարկմանը, առանձնապես ծավալային փոփոխություն չեն կրել և տնային տնտեսության մեկ շնչի հաշվով կազմել են, միջին հաշվով, 5200 դրամ: Ճիշտ է, տնային տնտեսությունների պարտքի բեռը վերջին տարիներին որոշ չափով նվազել է, տնային տնտեսությունների վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը (նկատի ունենք հիպոտեկային և սպառողական վարկերի գումարային ծավալի և ՀՆԱ հարաբերությունը) նվազել է՝ 2023 թ. կազմելով 22.7 տոկոս, 2022-ին՝ 27

⁴² Տե՛ս Հայաստան. տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, 2020, https://armstat.am/file/article/poverty_2020_a_3.pdf, Հայաստան. տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը և հիմնական սննդամթերքի սպառումը, 2023, աղյուսակ 3.1, https://armstat.am/file/article/poverty_2023_a_3.pdf, աղյուսակ 3.1, ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ՀՀ դրամով վարկերն ըստ ոլորտների, <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

տոկոս, 2021-ին՝ 28 տոկոս, 2020-ին՝ 30.2 տոկոս: Այս ցուցանիշը տարածաշրջանի երկրների համեմատությամբ, Վրաստանից բացի, բարձր է. Վրաստանինը 2022 թ.՝ 38 տոկոս⁴³:

2018 թ., 2017 թ. համեմատությամբ, չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի ռիսկային դաս ունեցող) տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում նվազել է 0.8 տոկոսային կետով և կազմել 4.4%: Հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի ու դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար՝ 1.4%, 1.2% և 1.7% (31.12.2017 թ. դրությամբ, համապատասխանաբար՝ 1.4%, 2.0% և 1.7%): Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է սպառողական, գյուղատնտեսության, հանրային սննդի ու այլ սպասարկման ոլորտի վարկերում, համապատասխանաբար՝ 7.0%, 6.6% և 5.4%⁴⁴:

2019 թ. տնային տնտեսություններին տրված վարկերի մեջ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, որն ընդունվում է որպես վարկային ռիսկ, բավական աճել է: 2019 թ. դեկտեմբերին տնային տնտեսությունների չաշխատող վարկերի ցուցանիշը կազմել է 5.9%⁴⁵: Դա հիմնականում պայմանավորված է եղել COVID-19-ի բացասական հետևանքներով: 2020 թ., հայտնի հանգամանքներով պայմանավորված, ամբողջական եկամուտները զգալիորեն նվազել են, տնային տնտեսությունների, այլ տնտեսական սուբյեկտների եկամուտները կրճատվել են, դրանց վճարունակությունը վատթարացել է, առաջ են եկել պարտքի սպասարկման ռիսկայինություններ, ինչի պատճառով վարկային ռիսկն աճել է: ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելում ավելացել է չաշխատող վարկերի տեսակարար կշիռը, որը տեղի է ունեցել հիմնականում սպառողական վարկային պորտֆելում չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճի պատճառով: Տարեվերջին տնային տնտեսությունների չաշխատող վարկերի ցուցանիշը գրեթե կրկնակի աճել է՝ կազմելով 8.9%: Սպառողական վարկերի աճի տեմպերի նվազմանը զուգահեռ, չաշխատող սպառողական վարկերի մասնաբաժինը ընդհանուր սպառողական վարկերում, նախորդ տարվա համեմատությամբ, զգալի աճել է՝ կազմելով 18.4%: Հատկանշական է, որ հիպոտեկային չաշխատող վարկերի տեսակարար կշիռը մյուս վարկատեսակների համեմատությամբ շարունակաբար պահպանվում է շատ ցածր մակարդակում՝ տարվա վերջի դրությամբ կազմելով 2.9%⁴⁶: 2021 թ. վարկային պորտֆելի որակը զգալիորեն բարելավվել է. չաշխատող վարկերի տեսակարար կշիռը նվազել է՝ հասնելով 3,5 տոկոսի: Չաշխատող վարկերի տեսակարար կշռի նվազում տեղի է ունեցել գրեթե բոլոր կարևոր վարկատեսակների մասով: 2022 թ. տնտեսական բարձր ակտիվության և եկամուտների աճի պայմաններում չաշխատող վարկերի կշիռը շարունակել է ցածր մնալ թե՛

⁴³ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, տարեկան, 2022, էջ 26-27, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2022.pdf,

⁴⁴ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2018, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2019.pdf

⁴⁵ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2019, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2020.pdf

⁴⁶ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2020, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2021.pdf

երկարաժամկետ միջինից, թե՛ նախքան համավարակի տարածումը եղած մակարդակից: Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը տարեվերջին կազմել է 2.8%: Ռեզիդենտներին տրամադրված հիմնական վարկատեսակների շարքում չաշխատող վարկերի տեսակարար կշիռն աճել է միայն քիզնես վարկերի դեպքում: Տնային տնտեսությունների վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2 տոկոսային կետով՝ կազմելով 4.1%, որը ցածր է եղել պատմական միջինից: 2022 թ. տնային տնտեսությունների ընդհանուր վարկային պորտֆելն աճել է մոտ 18%-ով: Չաշխատող սպառողական վարկերի կշիռը նվազել է 2,6 տոկոսային կետով և կազմել 6.8%, իսկ սպառողական վարկերի աճը տարեվերջին կազմել է շուրջ 5%: Հիպոտեկային չաշխատող վարկերի տեսակարար կշիռը նվազել է 0,5 տոկոսային կետով և մյուս վարկատեսակների համեմատությամբ պահպանվել է ցածր մակարդակում՝ 1.4%⁴⁷:

Ամփոփելով արձանագրենք, որ երկարաժամկետ, կայուն, անընդհատ տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է ապահովել ֆինանսական համակարգի և ֆինանսական կայունություն, քանի որ անկայունությունը, խոչընդոտելով դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը, տնտեսության ֆինանսական հատվածից կփոխանցվի տնտեսության իրական հատված և կհանգեցնի նաև մակրոտնտեսական անկայունության: Ուսումնասիրելով և վերլուծելով ՀՀ բանկային համակարգի՝ առևտրային բանկերի զարգացման ցուցանիշները, պարզել ենք ինչպես ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերը, այնպես էլ դրական զարգացումները:

Եզրակացություն: Ֆինանսական կայունության տեսանկյունից առևտրային բանկերի վարկային և ավանդային պորտֆելների ծավալների և կառուցվածքների փոփոխությունների ռիսկային դրսևորումներն են.

1. Առևտրային բանկերի ընդամենը վարկային պորտֆելում սպառողական վարկերի և հիպոտեկային վարկերի տեսակարար կշիռը բավական բարձր է, ինչը, ճիշտ է, մի կողմից՝ խթանում է սպառողական և ներդրումային պահանջարկը, դրանով իսկ՝ ամբողջական պահանջարկը, սակայն տնտեսության արտադրական, իրական հատվածին՝ ամբողջական առաջարկի խթանմանը համեմատաբար ավելի քիչ վարկային միջոցներ են ուղղվում (ոչ թե ծավալային առումով, այլ տեսակարար կշռի տեսանկյունից): 2012–2023 թթ. ՀՀ առևտրային բանկերի ռեզիդենտներին տրամադրել են վարկեր, որոնց ծավալներն ավելացել են տարեցտարի, և աճի միջին տարեկան տեմպը 22%-ից մի փոքր ավելի է եղել: Այդ նույն ժամանակահատվածում սպառողական և հիպոտեկային վարկերի գումարային ծավալի ավելացման տեմպը, միջին հաշվով, կազմել է մոտ 20%, իսկ ՀՆԱ իրական ծավալի աճի միջին տարեկան տեմպը՝ 5.8%-ից մի փոքր պակաս:

2. Դրամով տրամադրված վարկերի ծավալների ավելացումը դրական ազդեցություն է թողնում իրական ՀՆԱ աճի վրա: Ինչ վերաբերում է առանձին վարկատեսակներին, ապա դրանց ազդեցության չափերը տարբեր են: Ընդհանուր դրամային վարկերի 1 տոկոսային կետով աճի արագացումը հանգեց-

⁴⁷ Տե՛ս ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, էջ 29, https://www.cba.am/AM/ppublications/Stability_Report_2022.pdf

նում է իրական ՀՆԱ աճի 0.05 տոկոսային կետով արագացման: Սակայն հիպոտեկային և սպառողական վարկերի աճը ՀՆԱ-ի վրա ավելի փոքր ազդեցություն է ունենում. համապատասխանաբար՝ 0.008 և 0.026 տոկոսային կետ:

3. Տնային տնտեսությունների վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը 2017–2020 թթ. աստիճանաբար ավելացել է, առավելագույնը՝ 2020-ին՝ մոտ 7.5%, դրանից հետո աստիճանաբար նվազել է: Տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերի ոլորտում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ամենաբարձրն է՝ տնային տնտեսությունների բոլոր վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշռի և հիպոտեկային վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշռի համեմատությամբ: Ընդ որում, հիպոտեկային վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը 2017 թ. ի վեր ամենացածրն է եղել. 2022 թ.՝ 1.4 %: Հատկանշական է, որ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերի ոլորտում չաշխատող վարկերի տեսակարար կշիռը շարունակ նվազել է՝ սկսած 2015 թ-ից (մոտ 11%-ից) և 2022 թ. հասել է 1.4%-ի: Նկատենք, որ նկարագրված բոլոր օրինաչափություններից շեղում դիտվել է միայն 2020 թ., երբ բոլոր վարկերի գծով չաշխատող վարկերի տեսակարար կշիռն ավելացել է:

4. Ինդրահարույց է երկարաժամկետ և կարճաժամկետ վարկերի հարաբերակցությունը. առևտրային բանկերի կողմից տնտեսության տարբեր հատվածներին տրամադրված վարկերի կառուցվածքում համեմատաբար ցածր է երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը: Այսպես՝ իրավաբանական անձանց 5 տարուց ավելի ժամկետով տրամադրված վարկերի միջին տեսակարար կշիռը ընդամենը վարկերի ծավալում 2020–2023 թթ. կազմել է 0.54 տոկոս, ֆիզիկական անձանց նույն ցուցանիշը՝ 1.29 տոկոս: Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության դիտարկելիս տեսնում ենք, որ մեկ տարուց ավելի մարման ժամկետ ունեցող, այսինքն՝ երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռն ընդամենը վարկերում 2018–2023 թթ. ավելացել և հասել է 92 տոկոսի:

5. Առևտրային բանկերի կողմից տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների վարկավորման ոլորտում առկա են ճյուղային անհամամասնություններ. որոշ ոլորտներ ստանում են վարկային միջոցների հիմնական մասը, թեև չի կարելի ասել, որ դա չի համապատասխանում տնտեսագիտական այն օրենքին, ըստ որի՝ կապիտալը հոսում է տնտեսության այն հատվածներ, որոնք ավելի շահաբեր են, սակայն բացառված չէ, որ դրա համար կարող են լինել նաև այլ՝ ոչ օբյեկտիվ պատճառներ:

6. Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ տնային տնտեսությունների և ձեռնարկությունների դրամով և արտարժույթով ժամկետային ավանդներն աստիճանաբար ավելացել են: Միաժամանակ, ավելացել են տնային տնտեսությունների և ձեռնարկությունների դրամով ցպահանջ ավանդների տեսակարար կշիռները՝ նկատելիորեն գերազանցելով դրամով ժամկետային ավանդների տեսակարար կշիռներին, ինչը նշանակում է, որ աշխարհաքաղաքական վայրկվերումների աճը տնտեսական սուբյեկտներին ավելի պահպանողական և զգուշավոր է դարձրել: ՀՀ բանկային համակարգում ռեզիդենտներից արտարժույթով ներգրավված ավանդների ծավալում աստիճանաբար ավելանում է արտարժույթով ցպահանջ ավանդների տեսակարար

կշիռը՝ 2022 թ. դեկտեմբերին կազմելով 49 տոկոս՝ 2017 թ. 29,7 տոկոսի փոխարեն:

7. ՀՀ տնտեսության իրական հատվածի չորս խոշոր ոլորտներին՝ արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, շինարարությանը և տրանսպորտին ու կապին տրամադրված գումարային վարկերի տեսակարար կշիռը գրեթե 17 տոկոսային կետով զիջում է հիպոտեկային և սպառողական վարկերի գումարային ծավալների տեսակարար կշռին: Սա խոսում է ամբողջական առաջարկի ավելացման, կայուն, անընդհատ տնտեսական աճի ապահովման, ֆինանսական և մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից հնարավոր դժվարությունների առաջացման ռիսկի մասին, քանի որ հայտնի է, որ տնտեսության իրական հատվածին, այսինքն՝ արտադրող ձեռնարկություններին տրամադրված վարկերն ունեն ներուժ՝ խթանելու արտադրությունն ու նպաստելու, որ տնտեսական աճն ու զարգացումը, առաջին հերթին, հիմնվեն ամբողջական առաջարկի վրա:

8. Տնտեսության իրական հատվածում վարկերի տեղաբաշխումն ունի ճյուղային անհամամասնություններ: Եթե 2018–2023 թթ. արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում միջինում կազմել է 18.5%, մշակող արդյունաբերությանը՝ մոտ 11.5%, ապա 2023 թ. ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի միայն 11%-ն է բաժին ընկել արդյունաբերությանը, 5.37%-ը՝ մշակող արդյունաբերությանը: Նույն պատկերն է նաև իրական հատվածի մյուս ոլորտներում:

9. Ֆինանսական կայունության տեսանկյունից կարևոր է նաև արտաբաժնային ավանդների և արտաբաժնային վարկերի հարաբերակցությունը: 2018–2023 թթ. ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների արտաբաժնային ավանդների գումարային ծավալները էականորեն ավելի են ՀՀ ռեզիդենտներին տրամադրված արտաբաժնային վարկերի ծավալներից: 2023 թ. ՀՀ ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների որոշ ծավալը կազմում է գրեթե 2.9 տրիլիոն դրամ, իսկ դրանց տրամադրված արտաբաժնային վարկերի ամբողջ ծավալը՝ մոտ 1.8 տրիլիոն դրամ:

10. Վերլուծությունը փաստում է՝ թեև ՀՀ տնտեսությունում վերջին տասնամյակի ընթացքում դոլարայինացման մակարդակը որոշակիորեն նվազել է, այդուհանդերձ, համակարգային ֆինանսական ռիսկերի կուտակման աստիճանն ու սպառնալիքները շարունակում են մնալ բարձր, հետևաբար՝ այդ առումով, անհրաժեշտ են համապատասխան հավելյալ կարգավորումներ:

Որպես ամփոփում նշենք, որ ՀՀ բանկային համակարգը գրանցել է կայուն և շարունակական աճ՝ համալրելով կապիտալն ու ակտիվները, բայց կապիտալի շահութաբերության ցուցանիշը բացարձակ արժեքով էապես չի բարձրացել, և դրա ընդունելի մակարդակը ցածր է եղել բանկային համակարգում ներդրողների համար ընդունելի շահութաբերության մակարդակից: Աշխարհի զարգացող երկրներում կապիտալի վերադարձելիության ցուցանիշը սովորաբար ավելի բարձր է լինում, քան զարգացած երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում: Վերջին 15 տարիների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կապիտալի վերադարձելիության ցուցանիշը համադրելի է ԱՄՆ-ի և ԵՄ երկրների կապիտալի վերադարձելիության միջին ցուցանիշի հետ, սակայն պետք է ավելի բարձր լիներ՝ որպես զարգացող երկրի բանկային համակարգի ցուցանիշ:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023:
2. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2018, 2019, 2020, 2021, 2022, 2023:
3. ՀՀ ԿԲ ֆինանսական կայունության հաշվետվություն, տարեկան, 2017, 2018, 2019, 2020, 2021, 2022:
4. Ղալայան Ի., Հայաստանի բանկային համակարգը, <https://orbeli.am/hy/post/239/2019-06-20/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB+%D5%A2%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6+%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8>
5. Մարդոյան Ա., ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի կառավարման գործընթացը, «Բանբեր ԵՄՀ», № 1, 2017:
6. Ռաֆայելով Զ., Առևտրային բանկերի պորտֆելների գնահատումը և կառավարումը /տնտեսական և գործնական հարցեր/, Եր., Հեղինակային հրատ., 2007, <https://library.asue.am/books/3558.pdf>
7. Սարգսյան Ա., Իրացվելիության ռիսկը և դրա կարգավորումը բանկերում, <https://arar.sci.am/dlibra/publication/280939/edition/257954/content>
8. Багинова В.М. и др., Негативное воздействие кредитных механизмов на экономическое развитие. Bulletin USUES. Science, education, economy. Series economy, № 2 (12), 2015. <https://cyberleninka.ru/article/n/negativnoe-vozddeystvie-kreditnyh-mehanizmov-na-ekonomicheskoe-razvitie>
9. Банк России. Серия докладов об экономических исследованиях. Индикаторы долговой нагрузки. №5/июнь 2015, https://www.cbr.ru/Content/Document/File/16736/wps_5.pdf
10. Басс А.Б., Современные проблемы качества кредитного портфеля. Международный научный журнал «Инновационная наука», №4/2016, <https://cyberleninka.ru/article/n/sovemennyye-problemy-kachestva-kreditnogo-portfelya>
11. Бибикова Е.А. и др., Дисбаланс ликвидности коммерческих банков: понятие, методы оценки, Финансовая аналитика: проблемы и решения, 2018, т. 11, вып. 4, <https://cyberleninka.ru/article/n/disbalans-likvidnosti-kommercheskih-bankov-ponyatie-metody-otsenki/viewer>
12. Донец С., Пономаренко А., Банк России. Индикаторы долговой нагрузки. Серия докладов об экономических исследованиях, №5 / июнь, 2015.
13. Золотое правило банков: основные понятия и термины, <https://www.finam.ru/publications/item/zolotoe-pravilo-bankov-20230629-0811/>
14. Мартиросян А., Проблемы и перспективы развития банковской системы Армении, <https://cyberleninka.ru/article/n/problemy-i-perspektivy-razvitiya-bankovskoy-sistemy-armenii>
15. Машкур Л.Д.К., Роль коммерческих банков в рыночной экономике // Молодой ученый, № 18 (413), 2022, <https://moluch.ru/archive/413/91173/>

16. Попов М. и др., Актуальные проблемы банковского кредитования реального сектора экономики. Вестник СГСЭУ, № 2 (71), 2018, <https://cyberleninka.ru/article/n/aktualnye-problemy-bankovskogo-kreditovaniya-realnogo-sektora-ekonomiki>
17. Сенникова А.Е., Анализ влияния коммерческих банков на развитие экономики страны / Сенникова А.Е., Гречкина Л.С., Гайдуренко Ю.Д. // Вестник Академии знаний, № 43 (2), 2021, <https://cyberleninka.ru/article/n/analiz-vliyaniya-kommercheskih-bankov-na-razvitie-ekonomiki-strany/viewer>
18. Филиппова А. А., Качество кредитного портфеля как фактор стоимости банка. Финансы и кредит, 22 (406), 2010, <https://dokumen.pub/9785392242160.html>
19. Bernanke B., Gertler M. and Gilchrist S. (1999), The Financial Accelerator in a Quantitative Business Cycle Framework, in J. Taylor and M. Woodford (eds.), Handbook of Macroeconomics, Volume I. <https://faculty.wcas.northwestern.edu/lchrist/course/Czech/BGG%20999%20Handbook%20chapter.pdf>
20. Balgova M., Nies M. and Plekhanov A., The economic impact of reducing nonperforming loans. European Bank for Reconstruction and Development, Working Paper No. 193. Prepared in October 2016, <https://www.ebrd.com/publications/working-papers/economic-impact.html>
21. Arzevitin S. & so on, Banking liquidity as a leading approach to risk management, <https://philarchive.org/archive/ARZBLA>
22. Pierre-Richard Agénor a, Joshua Aizenman b, Alexander W. Hoffmaister. The credit crunch in East Asia: what can bank excess liquid assets tell us? Journal of Financial Economics, 106, 2004, <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S026156060300069X?via%3Dihub>
23. Financial Stability Report 2022, Previous publications of the Financial Stability Report and Inflation Reports are available on the official website of the Central Bank of Armenia, https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2022.pdf
24. Snowden K., A Historiography of Early NBER Housing and Mortgage Research, <https://www.nber.org/system/files/chapters/c13003/c13003.pdf>
25. Mian A., Sufi A., Verner E., How do Credit Supply Shocks Affect the Real Economy? Evidence From the United States in the 1980s, Working Papers, https://www.nber.org/system/files/working_papers/w23802/w23802.pdf
26. Sufi A., Housing, Household Debt, and the Business Cycle: An Application to China and Korea, July 2023, https://www.nber.org/system/files/working_papers/w31489/w31489.pdf
27. Housing Market Needs Two Major Changes to Help Americans, Published Dec 28, 2023, <https://www.newsweek.com/americans-need-2-major-changes-struggling-housing-market-1856236>
28. Հայաստանի բանկերի միություն, Հայաստանի բանկերի միությունն ամփոփել է բանկային գործունեության կիսամյակային

արդյունքները, 26.08.2022,
https://uba.am/uba/news/asulis_2022_1-in_kisamyak.html
29. Григорян Ф. Р., Совершенствование финансового взаимодействия банковского и реального секторов экономики России, 2013, <https://economy-lib.com/sovershenstvovanie-finansovogo-vzaimodeystviya-bankovskogo-i-realnogo-sektorov-ekonomiki-rossii>

ԳԱՅՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

ԿՆԱՐԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук*

ԹԵՐԵԶԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Магистрант кафедры макроэкономики АГЭУ

Проявления рисков депозитных и кредитных портфелей коммерческих банков РА.— Одной из закономерностей развития современной мировой экономики является постоянное взаимодействие реального и финансового секторов. Влияние банковской системы на реальный сектор экономики страны существенно. Внешние и внутренние импульсы распространяются из одного сектора экономики в другой по множеству каналов передачи. В результате установившееся макроэкономическое равновесие нарушается или макроэкономическое равновесие восстанавливается и поддерживается.

Анализ объемов депозитов и предоставленных кредитов и изменения их структуры позволяет выявить взаимосвязи двух взаимодействующих секторов экономики, влияние на развитие экономики и проявления рисков в банковском секторе.

В статье изучены и проанализированы изменения в структурах кредитных и депозитных портфелей коммерческих банков РА. С точки зрения финансовой устойчивости оценены проявления их рисков.

Был проведен анализ депозитных и кредитных портфелей коммерческих банков Республики Армения по разным направлениям с целью выяснения наличия проявлений рисков с точки зрения соответствия сроков привлекаемых и предоставляемых коммерческими банками средств, соотношения объемов и удельные веса различных видов кредитов, изменение объемов и структуры депозитов и кредитов резидентов и нерезидентов, соотношение долгосрочных и краткосрочных кредитов и другие аспекты.

Ключевые слова: *депозитный и кредитный портфели, риски, денежно-кредитная политика, финансовая устойчивость*

JEL: G21, G32

DOI: 10.52174/29538114_2024.2-78

GAYANE AVAGYAN

Associate Professor at the Chair of Macroeconomics at ASUE, PhD in Economics

KNARIK VARDANYAN

Associate Professor at the Chair of Macroeconomics at ASUE, PhD in Economics

TEREZA VARDANYAN

Graduate Student at the Chair of Macroeconomics at ASUE

Risk Manifestations of Deposit and Credit Portfolios of RA Commercial Banks.— One of the patterns of development of the modern world economy is that the real and financial sectors are constantly interacting. The impact of the banking system on the real sector of the country's economy is significant. External and internal impulses spread from one sector of the economy to another through multiple channels of transmission. As a result, the established balance is disturbed or the macroeconomic balance is restored and maintained. The analysis of the volumes of deposits invested in the country's banking system and the changes in their structures allows to identify the interrelationships of two interconnected and interacting sectors of the economy, the impact on the development of the economy and risk manifestations in the banking sector.

The paper examines and analyzes changes in the credit and deposit portfolio structures of commercial banks in the Republic of Armenia, evaluating their risk manifestations from a financial stability perspective. The study includes an analysis of the deposit and loan portfolios across various dimensions to identify any risk factors associated with the maturity of funds raised and issued by these banks, the ratio of volumes and specific weights of different loan types, and changes in the volumes and structures of deposits and loans held by residents and non-residents. It also considers the ratio of long-term to short-term loans and other relevant aspects.

Keywords: *deposit and loan portfolios, risks, monetary policy, financial stability*

JEL: G21, G32

DOI: 10.52174/29538114_2024.2-78